



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ,
ՎԵՂԱՐԻ ՏՎՁՈՒԹՅՈՒՆ

*«Աստուածային եւ երկնատը շնորհ,
որ միշտ լնու զպէքս սրբոյ սպասատրութեան
Մտաքելական Եկեղեցոյ»
(Շարական)*

Այս փարի, փետրվարի 29-ին, Սրբոց Ղևոնդյանց քահանայից փոնին մատուցված Ս. Պատարագի ընթացքում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ կատարվեց քահանայական ձեռնադրություն և օծում: Օրվա պատարագիչն էր Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: Աստվածային շնորհը կոչեց քահանայական ձեռնադրության չորս նվիրյալ սարկավազների, որոնք «յանձն առան կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոց եւ հայրապետաց, եւ կալ ըստ կանոնաց նոցա... ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ...»:

Ձեռնադրության նախորդ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, փեղի ունեցավ Արթուր, Հրաչ, Վահան և Արարատ սարկավազների քահանայական կոչման արարողությունը: «Նայեաց ի մեզ» հոգեպարար շարականի երգեցողության

ներքո ընծայացուները ծնկեցին Մայր Տաճարի Ավագ դռան մոտ և աստիճանաբար, սաղմոսասացների ու դպիրների երգեցողության ներքո, խարտավիլակ, Նոգեշնորհ Տ. Արշեն արեղա Սանոսյանի ուղեկցությամբ, առաջացան դեպի Իջման Սուրբ Սեդակի առջև բազմած ձեռնադրող Սրբազանը՝ Գերաշնորհ Տ. Շահն արքեպս. Աճեմյանը, որը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Աճեմյանը, որը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Նայր Սուրբին և քահանայացուներին: Տեղի ունեցավ վկայություն ընծայացուների հավաքի, կյանքի, կրթության և գիտության մասին: Հարց ու պատասխաններին անընդմեջ հաջորդեցին Ավարարանում ասված Տիրոջ խոսքերը առաքյալներին այս կամ այն առիթով, որ արտասանեց Սրբազան Նայրը. «Այսպես ասե՛ Տերն մեր Յիսուս Քրիստոս. Ամենայն, որ եթող զգրուն կամ զեղբարս..., խոստումն ամենակալին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի արժանացուցե՛ զբեզ անճառ խնդութեան...»:

Այնուհետև կատարվեց Սուրբ Երրորդության մասին ուղղափառ հավաքի և դավանության, Քրիստոսի մարդեղության մասին քննություն և խոստովանություն: Մեկ առ մեկ մերժվեցին և նզովվեցին այն բոլոր հերքերիկոսներն ու հերձվածողները՝ Արիստից մինչև Եվրիբեոս և Անթրովիպոս, որոնք ուրացան Քրիստոսին իբրև Աստված և մարդ «և ոչ Աստուածածինն զմուրը՝ Կոյսն Մարիամ», չխոստովանեցին Սուրբ Հոգուն համագոյակից Հորը և Որդուն, այսպես շարունակ մինչև «զԼեւոն եւ զԿոմմար իւր, զոր գրեաց զմին յերկուս բաժանեալ»: Նկատ Սրբազան Նայրը հարցրեց. «Աշակերտի՛ք և հեարևի՛ք սրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացոյն և Յոնթեոսի վարդապետին»՝ մեկ առ մեկ տալով այն բոլոր հայրապետների ու վարդապետների անունները, որոնք պահեցին ուղղափառ դավանանքն ու հավաքը, սահմանեցին Ուղղափառ Եկեղեցու կարգն ու կանոնը՝ մինչև Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի: Վերջում ընծայացուներն առաջին անգամ բարձրաձայն կարդացին հավաքի խոստովանությունը՝ միասին արտասանելով «Խոստովանիմք եւ հաւատամք ամենակալարար սրբոյ զՆայրն Աստուած անեղ, անծին եւ անսկիզբն...»:

«Նայր մեր» և «Պահպանիչ» աղոթքներով ավարտվեց կոչման կարգը:

Հաջորդ օրը, փետրվարի 29-ին՝ **տօն սրբոց Աստուղեանց քահանայիցն**, հընթացս Ս. Պարարագի կատարվեցին Արթուր, Նրաչ, Վահան և Արարատ սարկավագների քահանայական ձեռնադրությունն ու օծումը՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահն արքեպս. Աճեմյանի և խարտավիլակությամբ Նոգեշնորհ Տ. Արշեն արեղա Սանոսյանի:

Պարարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած...»: Ընծայացուները ապրանում ծուկի եկած, սաղմոսների և շարականների երգեցողության ներքո, մոտենալով բարձրացան Ս. Խորան, որտեղ կատարվեց ձեռնադրության բուն մասը: Ընթերցվեցին քարոզներ, աղոթքներ ըստ Մաշտոցի, որոնց հաջորդեց հրաժարման պահը: Քահանայացու սարկավագները դառնալով արևմուտք, ձեռքերը վեր բարձրացրած, «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» երգի ներքո հրաժարվեցին աշխարհից և աշխարհայինից: Այնուհետև Սրբազան Նայրն իր աջը դնելով նվիրյալների վրա՝ ասաց. «Ես դենմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան

աղօթս արարեք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայութեան՝ անարար պահել առաջի սեղանոյն Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև աղօթքներով և շարականներով փառաբանվեց Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձը, հայցվեց Սուրբ Հոգու շնորհը «առ ի մերժել եւ հեռացուցանել զամենայն ախարս չարաչարս եւ զայսս պիղծս ի մարդկանէ...»: Ուրարը, որ մինչ այդ սարկավագները կրում էին ձախ ուսին՝ իբրև Զրիսպոսի լուծի կիսով չափ կրողներ, Սրբազանն անցկացրեց յուրաքանչյուրի պարանոցով՝ այդպիսով խորհրդանշելով Տիրոջ ամբողջական լուծը:

Այնուհետև Ձեռնադրության Մաշտոցից կարդացվեցին օրվա ճաշու ընթերցվածքները, և Պապարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»: Այսպեղ ընդհատվեց Պապարագը, և դպիրները շարունակեցին երգել ձեռնադրության շարականները: Հաջորդաբար, աղօթքների ընթերցմամբ փոխվեցին քահանայական հանդերձանքը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը: Այսպես, Սրբազանը նախ զգեստավորեց փիլոնով՝ ասելով «Յիսուս Զրիսպոս հայեաց ի ծառայս քո...» աղօթքը, որից հետո սաղավարպը դնելով գլուխներին ասաց. «Առ քեզ սաղաւարպ փրկութեան...» աղօթքը, հետո փոխեց շուրջառը և վերջապես՝ գոպին, որով Սուրբ Հոգուց իշխանություն ստացան «կապելոյ եւ արձակելոյ», ինչպես ասաց Հիսուս Իր աշակերտներին: Այսպեղ փակվեց վարագույրը, և ընծայացուները «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո առաջին անգամ զգեստավորվեցին պապարագի հանդերձանքով: Վարագույրը բացվեց, և, հանդիսավորապես, Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղան մոմակիրների, բուրվառակիրների և քջոցակիրների ուղեկցությամբ «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողության ներքո մկրտության սուրբ ավագանից վերջերեց Սրբալույս Մյուռոնի աղավինի և ձախակողմյան աստիճաններով բարձրանալով՝ փոխեց Սրբազան Հորը: Սրբազանը երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը՝ հեղեց Սուրբ Մյուռոնը բթնոցի (փոքրիկ բաժակ) մեջ, որից հետո «Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի...» ասելով՝ դրոշմեց նրանց ճակարդ, աջ և ձախ ձեռքերը՝ փալով նրանց քահանայական անունները հետևյալ հերթականությամբ. Արթուր սարկավագը վերանվանվեց Տ. Մանթեոս, Հրաչ սարկավագը՝ Տ. Մարկոս, Վահան սարկավագը՝ Տ. Ղուկաս, Արարապ սարկավագը՝ Տ. Ղևոնդ: Հետո Սրբազանը նրանց հանձնեց Սուրբ Սկիհը, մաղգման «հանդերձ կենարար Մարմնով եւ Արեամբ»՝ փալով Սուրբ Պապարագ մարտիցելու իշխանություն:

Վերջապես օծյալները փոխեցին քահանայական իրենց անդրանիկ օրհնությունը բազմաթիվ ներկա հավաքացյալներին: «Պահպանիչ» աղօթքով ավարտվեցին Ձեռնադրությունն ու Օծումը, և Սրբազան Հայրը նորընծաներին ուղղեց իր հայրական պարգամը՝ հիշեցնելով Գոնի խորհուրդը, Ղևոնդյանց քահանայից անձնագրությունը: Այնուհետև ներկա բոլոր հոգևորականները մեկ առ մեկ բարձրացան Սուրբ Խորան և այդ օրվա ողջույնը առան նորած քահանաներից: Ս. Պապարագի

ավարտին նրանց շնորհավորեցին նաև բազմաթիվ հավատարացյալներ՝ համրությունով նրանց մյուտուաօժ աջերը:

Նույն օրը, երեկոյան, փնդի ունեցավ նորընծա Ս. Մաթթեոս, Ս. Մարկոս և Ս. Ղուկաս քահանաների արևդայից օրհնության կանոնը: Ձեռնադրող Շահն արքեպիսկոպոսը կարդալով Մաշտոցից աղոթքներ՝ իր օձյալ աջը հերթով դրեց նորընծաների գլուխներին՝ հայցելով Տիրոջ օգնությունը, Սուրբ Հոգու էջը և շնորհը: Սրբազան Հայրն ընթերցեց նաև Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձին ուղղված աղոթքները, որոնցով երիցս օրհնվեցին արեղաները:

Արարողության վերջում կատարվեց վեղարի օրհնության կարգ: Վեղարները դրվեցին նորընծաների գլուխներին՝ իբրև կուսակրոն քահանայության խորհրդանիշ:

Աղոթենք առ Աստված, որ Տերը հասպատար պահի նորընծաներին իրենց կարգի մեջ և արժանացնի՝ լինել մշակ առանց ամոթո. ամեն:

ՎԱՐԴԳԵՍ ՄՐԿ. ՄԱՅԻԼՅԱՆ

Գևորգյան Հոգևոր Ընտարանի

Զ լսարանի սան

